

“ԹԱԹՍԹՈՈՒՆ” ՍՊԸ

ՀՀ Սյունիքի մարզի Լիճքի հանքավայրի
տեղամասում 110 կՎ բարձրավոլտ օդային
գծի և ենթակայանի կառուցում

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

Կատարող՝ “Քոնսեկրարդ” ՍՊԸ
Տնօրեն՝
Վ.Թևոսյան

Երևան, 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՁԵՌՆԱԿՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.....	3
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ	5
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ	5
3.1. Երկրաբանական կառուցվածք	5
3.2. Ջրային ռեսուրսներ	6
3.3. Հողածածկ	6
3.4. Կլիմայի հակիրճ բնութագիր	7
3.5. Բուսականություն	11
3.6. Կենդանական աշխարհ	12
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	13
4.1. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների համառոտ նկարագիրը	13
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ..	14
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	16

1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՁԵՌՆԱՐԿՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Թաթաթոուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /ՍՊԸ/
գործունեության հիմնական ոլորտը հանքարդյունաբերությունն է:

«Թաթաթոուն» ՍՊԸ հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Երզնկյան 79 տ., հեռ. +37493 33 88 33, էլ.
Փոստ tkrmoyan@yandex.ru,

2015 և 2017 թվականներին ընկերությունը իրականացրել է 220 կՎ օդային գծի մի
հատվածի տեղափոխում ՀՀ Սյունիքի մարզի Լիճքի հանքավայրի տեղամասում: Այդ
գործունեության շրջանակներում մշակվել են ՇՄՍԱԳ հաշվետվություններ, որոնք
ներկայացվել են ՀՀ բնապահպանության նախարարություն և իրականացված
փորձաքննության արդյունքում ստացվել են դրական փորձաքննական
եզրակացություններ:

Ներկայացվող հայտը վերաբերում է նոր՝ 110 կՎ օդային գծի և համապատասխան
ենթակայանի կառուցման աշխատանքներին:

Ստորև ներկայացվում է տեղեկանք ընկերության ընդերքօգտագործման
բնագավառում ընթացիկ գործունեության մասին:

Տեղեկատվություն 01.04.2017 թ. դրությամբ

[/www.minenergy.am/.../pg_9200023633882_3USUMNASIRUTYUN_cucak_2/](http://www.minenergy.am/.../pg_9200023633882_3USUMNASIRUTYUN_cucak_2/)

օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին

N	Իրավաբանական անձի անվանում	Գործունեության իրականացման վայրը	Թույլտվության համարը /ԵՀԹ-.../, /ԵՀԹՎ-.../	Գործունեության նպատակը	Թույլտվության տրամադրման ամսաթիվը	Թույլտվության դրույթի ցուցանիշի ժամկետի ավարտը	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, կնքման ա.ա.տ.	Ծանոթություն
1	2	3	4	5	6	7	8	9
	<Թաթաթոուն> ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ Այգեձորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի թղկուտի տեղամասի թևերում և ստորին հորիզոններում	ԵՀԹ-29/112	Երկրաբանական ուսումնասիրություններ	12.10.12թ	30.09.15թ	Պ-112 12.10.12թ	Գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 30.09.2017թ.
	«Թաթաթոուն» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզ, Լիճքի բազմամետաղների հանքային դաշտ	ԵՀԹ-29/225	Երկրաբանական ուսումնասիրություն	11.06.16թ.	11.06.19թ.	Պ-225 11.06.16թ.	

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

“ԹԱԹՍԹՈՈՒՆ” ՍՊԸ նախատեսում է իրականացնել Լիճքի հանքավայրի շահագործում: Հանքավայրը գտնվում է Սյունիքի մարզի Լիճք բնակավայրի մերձակայքում:

Հանքավայրի շահագործումը էներգատար գործունեություն է և պահանջում է էլեկտրական էներգիայի մատակարարման առանձին օղային գիծ: Ըստ ԲԵՅ ՓԲԸ տվյալների մոտակա միացման տեղամասը՝ 2.5 կմ հեռավորության վրա անցնող 110 կՎ օղային գիծն է:

Հանքավայրի անխափան էներգամատակարարումը ապահովելու համար ընկերությունը պետք է կառուցի 2.5 կմ երկարությամբ օղային գիծ և հանքավայրի տարածքում ենթակայան՝ համապատասխան տրանսֆորմացիա անելու համար:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Լիճքի հանքավայրը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Լիճք բնակավայրի մերձակայքում: Տեղանքի բնակլիմայական պայմանները բերված են համապատասխան ենթաբաժիններում:

Նախատեսվող ՕԳ և ենթակայանի շինարարությունը իրականացվելու է “ԹԱԹՍԹՈՈՒՆ” ՍՊԸ տրամադրված լեռնահատկացման տարածքում: Տարածքի կատեգորիան՝ հանքարդյունաբերական:

3.1. Երկրաբանական կառուցվածք

Ուսումնասիրվող տարածաշրջանը գտնվում է Մեղրի գետի լեռնաշղթայի հարավային լեռնաճյուղերին, որտեղ լայն տարածված են պալիոգենի հասակի ինտրուզիվ կազմավորումները, որոնք ծածկված են էյուվիալ, դեյուվիալ և այլուվիալ նստվածքներով՝ ներկայացված բեկորա-կավավազային բնահողերով:

Ինտրուզիվ կազմավորումները գաբրոիտային և մոնցոնիտային ապարներ են, որոնք տարբեր աստիճանի հողմնահարված են մինչև 2-3մ խորության վրա: Օժտված են նկատելի ճեղքվածությամբ մինչև մեծաբեկոր անջատումներով, առանձին հատվածներում ծածկված են դեյուվիալ-էյուվիալ բնահողերով մինչև 3-4մ հզորությամբ, ներկայացված բեկորա-կավավազային բնակազմով: Ժամանակակից այլուվիալ նստվածքային գոյացումները տեղակայված են գետահունների և մասամբ հունապոյմային հատվածներում, ներկայացված գլաքարա-ճալաքարային բնահողերով: Նրանց հզորությունը խիստ անկայուն է և տատանվում է 2.5-3.0մ սահմաններում:

Տեկտոնական տեսանկյունից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Մեղրի-Բողաքարյան, Վանք-Պարվանքի տարանջատված անտիկլինալային ստրուկտուրայում, որոնց արանքում տեղակայված է Բերդաքար-Լիճք սինկլինալը:

Որպես առավել խոշոր վրաշարժային բնույթի տեկտոնական խախտում վկայակոչվում է Շիշկերտ-Տիրաթաղի խզվածքը: Կարևորվում է նաև Դերաքլուի վարնետը՝ Քաջարան-Ագարակ ուղղությամբ:

Տեկտոնական տեսանկյունից ուսումնասիրվող տարածքը համաձայն “ՀՀ տեկտոնական շրջանացման քարտեզի” գտնվում է սեյսմիկության 2 գոտում:

3.2. Ջրային ռեսուրսներ

Տեղանքի հիմնական ջրային ռեսուրսն է Մեղրի գետը:

Մեղրի գետը հանդիսանում է Արաքս գետի ձախակողմյան վտակը և թափվում է վերջինիս մեջ գետաբերանից 312կմ հեռավորության վրա : Ընդհանուր ջրհավաք ավազանի մակերեսը հավասար է 336կմ², գետի երկարությունը – 36կմ, գետի միջին թեքությունը - 62‰, ավազանի միջին բարձրությունը – 2200մ, անտառածածկույթը - 16%:

Գետը իր սկիզբը առնում է Դեգակլու լեռնանցքից հարավ մի խումբ աղբյուրներից, որոնք դուրս են գալիս բազալտների ճեղքվածքներից 3240մ բարձրության վրա: Վարչականորեն գետավազանը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում:

Մեղրի գետի ավազանը հյուսիսից սահմանամերձ է Ողջի գետի ավազանի հետ, որոնց ջրբաժանը Մեղրիի լեռնաշղթան է (2811մ), արևելքից Ծավ գետի ավազանի հետ, (Բաղաց սար – 3249.5մ), հարավ-արևելքից Արաքս գետի մանր վտակների ավազանների հետ, իսկ արևմուտքից Նախիջևանի գետերի ավազանների հետ, որոնցից անջատվում է Զանգեզուրի լեռնաշղթայով (ամենաբարձր գագաթը Սարիդարա - 3750մ):

Մեղրի գետի ջրաձևաչափական բնութագրիչները

Աղյուսակ 2.1.

Ավազանի մակերեսը, կմ ²	Գետի երկարությունը, կմ	Գետավազանի բարձրության նիշերը, ծ.մ.			Գետի թեքությունը, ‰	Լանջերի թեքությունը, %	Անտառապատվածությունը, կմ ²
		առավելագույն	ակունք	միջին բարձրությունը,			
268	28.0	3754	2887	2200	132	410	6.27

3.3. Հողածածկ

Տեղանքի հողային ծածկույթը ներկայացված է ներքին հոսանքներում գորշ լեռնային հողերով, տեղ-տեղ աղուտացված: Ավելի վեր տարածված են լեռնաանտառային տափաստանային հողերը, որոնց հաջորդում են լեռնաանտառային դարչնագույն հողերը, այնուհետ՝ մերձալպյան լեռնատափաստանային սևահողերը, իսկ ավելի վեր՝ ալպյան լեռնամարգագետնային և սուբնիվալ հողեր:

Տարածաշրջանի ավելի ծացրադիր վայրերում հողածածկը հանդես է գալիս գորշ լեռնային հողերով: Այս տեսակ հողերը զարգանում են շոգ և սակավ խոնավապահովված կլիմայական պայմաններում, չոր տափաստանային գոտուն բնորոշ հացազգի տարախոտային բուսական խմբավորումների տակ, հիմքերով հարուստ հրաբխային և նստավածքային ապարների հողմնահարված նյութերի վրա: Այս տիպի հողերի համար հատկանշական է միջին կլանման ծավալը, թույլ հիմնային ռեակցիան, կարբոնատների և քարի զգալի պարունակությունը: Հողերի զգալի մասը քարքարոտ է (70%), էրոզացված (74%):

Վերին հատվածներում տարածված են լեռնաանտառային տափաստանային հողերը: Այս տիպի հողը բարենպաստ է ծառային բուսականության առաջացման համար: Ջրաբանական պրոցեսները ակտիվ են: Այս գոտուն հաջորդում են լեռնաանտառային դարչնագույն հողերը: Այս տեսակի հողերը զարգանում են չափավոր տաք, փոփոխական խոնավություն ունեցող կլիմայական ու չոր ծառափուտատեսակներով հարուստ բոխու-կաղնու-թխկու անտառային ծածկոցի պայմաններում: Բնութագրվում են հորիզոնների թույլ, առանձին դեպքերում չափավոր գատորոշմամբ, խոր և ինտենսիվ կավայնացմամբ, վերին հորիզոնի չափավոր հումուսացվածությամբ (4-6%), միջին կլանունակությամբ, չեզոք կամ թույլ հիմնային ռեակցիայով, բավարար ազրեզացվածությամբ և լավ արտահայտված իյուվիալ-կարբոնատային հորիզոնով: Առանձնացվում են կարբոնատային, տիպիկ և կրագուրկ ենթատիպեր, մերգելացված, տիպիկ, խճա-բեկորային, մնացորդային, մնացորդային կարբոնատային, գիպսակիր, թույլ գատորոշված, թերի զարգացած, տափաստանացված և այլ սեռեր: Այս հողերի գրեթե 58% էրոզացված է:

Լեռնաանտառային դարչնագույն հողերին հաջորդում են լեռնատափաստանային սևահողերը: Վերջիններս ձևավոնվում են հրաբխային սարավանդների և նրանց հարող լեռնային համակարգի անտառագուրկ գոգավորությունների 1250-1800մ բարձրության սահմաններում:

Ավելի վեր տարածվում են ալպյան լեռնամարգագետնային սևահողերը: Տվյալ հողատիպի սահմաններում առանձնացվել են ճմատորֆային, ճմային և թույլ ճմային ենթատիպերը, մնացորդային հագեցած, մնացորդային չհագեցված, օրգանածին-խճային, հումուսագլեացած, թերի ցարգացած և այլ սեռեր:

3.4. Կլիմայի հակիրճ բնութագիր

Տեղանքի կլիման բնութագրվում է զով ամառներով և մեղմ ձմեռներով: Կլիմայի բնութագրման համար օգտագործվել են բազմամյա տվյալներ, որոնք բերված են աղյուսակ 2.2-ում:

Աղյուսակ 2.2. Օդերևութաբանական կայանների ցուցակ

<i>h/h</i>	<i>Օդերևութաբան. կայաններ</i>	<i>Բարձրությունը ծովի մակ.հաշվ. մ</i>	<i>Դիտարկումների ժամանակաշրջան</i>	<i>Դիտարկումների տարիների թիվը</i>
------------	-------------------------------	---------------------------------------	------------------------------------	------------------------------------

1	Մեղրի	627	1930	գործում է
2	Լիճք	1769	1936	գործում է

Օդի ջերմաստիճանը

Լեռնային շրջանների օդի ջերմաստիճանը շատ բազմազան է, այն կախված է տեղանքի բարձրությունից, ռելիեֆի ձևից և լանջերի դիրքորոշումից: Միջին բազմամյա օդի տարեկան ջերմաստիճանը Մեղրի կայանում հավասար է 14.1(С:

Աղյուսակ 2.3. Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը °С

№	Կայան	I	II	III	IV	V	VI	VIII	VIII	IX	X	XI	XII	Միջին
1	Մեղրի	1.4	3.2	7.8	13.9	18.8	22.9	26.1	25.6	21.2	15.1	9.2	3.9	14.1

Օդի միջին օրական ջերմաստիճանի անցումը 0(С-ից ըստ Մեղրի օդերևութաբանական դիտակայանի տեղի է ունենում փետրվարի 12-ին և դեկտեմբերի 28-ին: 0(С-ից բարձր ջերմաստիճանի օրերի քանակը Մեղրիում կազմում է 317 օր:

Գարնան գալը, այսինքն օդի միջին օրական ջերմաստիճանի անցումը 5(С-ից, տեղի է ունենում փետրվարի 28-ին և դեկտեմբերի 3-ին: 5(С-ից բարձր օդի ջերմաստիճանի օրերի քանակը Մեղրիում 277 է:

Ամռան գալը կամ օդի միջին օրական ջերմաստիճանի անցումը 10(С-ից, տեղի է ունենում մարտի 25-ին և նոյեմբերի 7-ին: 10(С-ից բարձր օդի ջերմաստիճանի օրերի քանակը Մեղրիում 226 է:

Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը Մեղրիում (+41(С) է, օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ (-18(С): Մեղրիում հողի սառչելու առավելագույն խորությունը 12սմ է, իսկ գլխամասային հանգույցի ուղղահատածքում՝ 50-60սմ

Տեղումներ և ձյան ծածկույթ

Ընդհանրապես, տեղումների քանակը խոնավաբեր քամիների ուղղության նկատմամբ, ուղղակի կախվածության մեջ է լանջերի դիրքորոշումից, ինչպես նաև տեղանքի բարձրությունից: Ուսումնասիրվող տեղանքի տեղումների քանակը տեղաբաշխվում է ոչ համաչափորեն, որը կախված է խոնավաբեր օդային մասսաների նկատմամբ տեղանքի բարձրությունից և թեքությունից: Հողմակողմ թեքություններում տեղումների քանակը ավելի շատ է, քան քամուց պաշտպանված թեքություններում:

Տեղումների քանակի 43-49%-ը լինում է ցուրտ ժամանակաշրջանում (նոյեմբեր-մարտ), ամենաանձրևային ամիսներն են ապրիլը և մայիսը, ամենաչորայինը՝ դեկտեմբերը:

Աղյուսակ 2.4. Տեղումների միջին բազմամյա ամսական և տարեկան քանակը, (մմ)

h/h	Կայանը	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	XI-III	IV-X	Միջ.տ
1	Մեղրի	18	18	32	41	52	30	10	7	13	23	24	15	107	176	283

2	Լիճք	61	69	105	112	110	64	21	16	24	60	79	47	361	407	768
---	------	----	----	-----	-----	-----	----	----	----	----	----	----	----	-----	-----	-----

Մեղրիում տարեկան առավելագույն տեղումների քանակը հասել է 402մմ: Ամսական առավելագույն տեղումների քանակը կազմել է 113մմ, իսկ օրականը՝ 40մմ:

Մեղրիում ձյան ծածկույթի տասնօրյակային բարձրությունը ձմռան ընթացքում 27սմ է, իսկ գլխամասային հանգույցի ուղղահաստածքում՝ 50սմ :

Աղյուսակ 2.5. Չնածածկի, կայուն ձնածածկի առաջացման և վերացման ամսաթվերը

Կայանը	Չնա ծածկ. օրերի թիվը	Չնածածկի առաջացման ամսաթիվը			Կայուն ձնածածկի ձևավորման ամսաթիվը			Կայուն ձնածածկի վերացման ամսաթիվը			Չնածածկի վերացման ամսաթիվը		
		միջին	վաղ	ուշ	միջին	վաղ	ուշ	միջին	վաղ	ուշ	միջին	վաղ	ուշ
Մեղրի	16	22.12	15.11	-	-	-	-	-	-	-	27.02	-	15.0

Օդի խոնավությունը

Օդի գոլորշու առաձգականության տարեկան ընթացքը համապատասխանում է օդի ջերմաստիճանի ընթացքին և հասնում է առավելագույն արժեքների ամռանը և նվազագույնի՝ ձմռանը:

Բացի այդ, ջրային գոլորշու առանձգականությունը հակադարձ համեմատական է տեղանքի բարձրությանը. բարձրության աճման հետ նա փոքրանում է, իսկ բարձրության նվազման հետ, համապատասխանաբար, մեծանում: Ամռանը ջրի գոլորշու առաձգականությունը մեծանում է, իսկ ձմռանը՝ փոքրանում:

Աղյուսակ 2.6. Ջրային գոլորշու միջին բազմամյա ամսական և տարեկան առաձգականությունը (մք)

հ/հ	Կայանը	I	II	III	IV	V	VI	VIII	VIII	IX	X	XI	XII	Միջին
1	Մեղրի	4.8	5.0	6.3	9.1	13.0	15.0	16.2	15.9	14.6	11.0	7.7	5.5	10.3

Օդի հարաբերական խոնավությունը, որը բնութագրում է օդի հագեցվածությամբ ջրային գոլորշիով, տարվա ընթացքում փոփոխվում է: Ամենաշատը դիտվում է ձմռանը, նվազագույնը՝ ամռանը:

Աղյուսակ 2.7. Միջին բազմամյա ամսական և տարեկան հարաբերական խոնավությունը (%)

հ/հ	Կայանը	I	II	III	IV	V	VI	VIII	VIII	IX	X	XI	XII	Միջին
1	Մեղրի	63	61	62	61	61	55	49	50	60	67	67	65	60

Օդի հարաբերական խոնավության օրական ընթացքը վառ արտահայտվում է ամռանը: Սովորաբար ներտարեկան բաշխման տատանումները աննշան են և կազմում են 18%, նվազագույնը տեղի է ունենում հուլիսին, իսկ առավելագույնը՝ հոկտեմբերին և նոյեմբերին:

Քամի

Ուսումնասիրվող շրջանում, ինչպես նաև ՀՀ շատ շրջաններում, բնորոշ է օդի լեռնահովտային շրջապտույտը, քամու ուղղությունը որոշվում է գետի հովտի ուղղությամբ: Լեռնահովտային շրջապտույտի ժամանակ լավ է արտահայտված քամու ուղղության օրական ընթացքը: Յերեկային ժամերին հովիտներից տաք օդը թեքություններով բարձրանում է վերև, իսկ մնացած ժամանակ սառը օդը իջնում է ցած: Լեռնահովտային շրջապտույտը ուժեղանում է ամռանը, երբ լեռների և հովիտների միջև թերմիկ գրադիենտը մեծանում է:

Լեռնային շրջաններին հիմնականում բնորոշ է լեռներից փչող տոթ ու չոր քամին: Հաճախ դրանք դիտվում են տարվա ցուրտ ժամանակ, կան վայրեր, որտեղ քամու ուղղությունը կտրուկ փոխվում է՝ դիտվում է ջերմաստիճանի բարձրացում և խոնավության անկում:

Մեղրի կայանում գերակշռում են հյուսիսարևելյան քամիները: Քամու միջին ամսական արագությունը տատանվում է 1.4-1.9մ/վրկ սահմաններում: Տարվա ցուրտ եղանակին քամու արագությունը ավելի փոքր է, քան ամռանը:

Քամու տարեկան արագությունը Մեղրիում կազմում է 1.6մ/վրկ :


Նկար 1-ում բերված են քամու վարդը, իսկ աղյուսակներում քամու արագության և ուղղության տվյալները:

Աղյուսակ 2.8. Քամու միջին ամսական և տարեկան արագությունը, մ/վրկ.

h/h	Կայանը	Տյու-գերի բարձ. մ	I	II	III	IV	V	VI	VIII	VIII	IX	X	XI	XII	Միջին տար.
1	Մեղրի	11.0	1.6	1.7	1.6	1.5	1.4	1.6	1.9	1.8	1.8	1.4	1.4	1.7	1.6

Աղյուսակ 2.9. Քամու ուղղությունը

h/h	Կայանը	Կայանի բարձ. մ	Հս.	Հս-Արևելք	Արևելք	Հվ-Արևելք	Հրվ.	Հրվ-Արև մ	Արև մ	Հս-Արև մ	Շտիլ
1	Մեղրի	627	14	12	29	14	8	4	9	10	48



Նկար 1. Քանու վարդը ըստ Մեղրի կայանի տվյալների

3.5. Բուսականություն

Տարածաշրջանը ընդգրկված է Մեղրու ֆլորիստիկ շրջանում:

Ափային բուսականության տեսականին պայմանավորված է հիմնականում հողային ծածկույթով և արևային ճառագայթների ինտենսիվությամբ:

Ուսումնասիրվող տարածքի բուսածածկը ներկայացված է լայնատերև անտառային բուսականությամբ, մասնակցությամբ հետևյալ ծառատեսակների և թփերի՝

Բոխի սովորական (Carpinus betulus)

Կաղնի վրացական (Quercus iberica)

Կաղնի արևելյան (Quercus macranthera)

Հացենի սովորական (Fraxinus excelsior)

Լորենի մանրատերև (Tilia cordata)

Թխկի դաշտային (Acer campestre)

Բռինչ (արջի չամիչ) (Viburnum lantana)

Մոշենի սովորական (Rubus caesius)

Հաղարջենի ոսկյա (Ribes aureum)

Մապրենի շնային (Roza canina):

Գետի մերձափնյա մասերում որոշ հատվածներ ծածկված են ավազաքար (պսամոֆիլ) անապատային բուսական խմբավորումներով: Տարածված բուսատեսակներից են՝ նրբատերև Հազարատենուկը, ծաղկավոր Զեյդլիցիան, ավազաքար Եզնապտուղը, սովորական Տատաշը, Ճայկտուցը, Խոզանուկը:

Տարածաշրջանում զգալի մաս են կազմում վաղամեռ (էֆեմեր), ճիմ առաջացնող հացազգիները (Անապատասեզ, Յորունկ, Այծակն, Դաշտավլուկ): Տարածված բուսատեսակներից են նաև Կապարը, Կոխիան, Նոնեան, Լերդախոտը, Բորբոսատեսուկը: Լեռնաչորասեր բուսականությունը գրավում է տարածաշրջանի մեծ մասը: Տեսակային կազմը բուսաաշխարհագրական տեսակետից մեծ հետաքրքրություն

է ներկայացնում, այստեղ կան հազվագյուտ տեսակներ, էնդեմներ ու ռելիկտներ, ինչպես օրինակ, վայրի տանձենիները (Թախտաջանի, Մոսնովսկու, ուռատերև), նշենիները (Ֆենցլի, Նաիրյան), Խնկենին, Ունաբը, Ցաքին (Ժանտափուշը) և այլն: Սովորական բուսատեսակներից կարելի է հիշատակել Եղեսպակը, Աբեղախոտը, Գազերը, Ոգնաթփերը, Դժնիկը, Լերդախոտը, Օշինդրը և այլն: Այս տիպի բուսականությունը իր մեջ պարունակում է մեծ քանակի համեմունքային (Ուրց, Եղեսպակ), դեղատու (Դժնիկ, Արևոսկի, Արևքուրիկ), թելատու, եթերայուղատու, ուտելի և վիտամինային բույսեր:

Գետի հովտի ավելի ցածրադիր մասերում տարածված են քսերոֆիլ՝ սաղարթավոր նոսր անտառներ, կաղնու ու բոխու անտառներ՝ վրացական և արևելյան կաղնիով: Քսերոֆիլ սաղարթավոր նոսր անտառներում կարելի է հանդիպել ցածրաբուն, լուսասեր ծառերի ու թփերի, ինչպիսիք են՝ Ցաքուն, Ասպիրակը, Ցրպտկը, Ցախակեռասները, Դժնիկը, Հասմիկը, վրացական Թիսկին: Ոչ խոշոր հատվածներով ինքնուրույն նոսրանտառներ են առաջացնում նաև Խնկենին, Նոնենին, Դրախտածառը:

Վայրի օգտակար բուսատեսակներից այստեղ բազմաթիվ են այն տեսակները, որոնք տարածված են ամենուրեք ՀՀ տարածաշրջանում՝

Հազարատերևուկ սովորականը (*Achillea millefolium*)

Առյուծագի սովորականը (*Leonurus cardiaca*)

Օշինդր դառը (*Artemisia absinthinum*)

Երեքնուկ կարմիր և երեքնուկ սողացող (*Trifolium hybridum, Trifolium repens*)

Ձիաձեթ դաշտային (*Equisetum arvense*)

Մաարենի շնային (*Roza canina*)

Ուրց Կոչիի (*Thymus kotschyanus*):

Նախատեսված տարածքում, համաձայն հրատարակված գիտական և քարտեզագրական նյութերի՝ չեն հայտնաբերվել հազվագյուտ, էնդեմիկ, անհետացող կամ անհետացման եզրին գտնվող, “Կարմիր Գրքում” (2010թ.) գրանցված բուսատեսակներ:

3.6. Կենդանական աշխարհ

Տարածաշրջանի կենսաբազմազանությունը ձևավորվել է ինչպես սեփական աշխարհագրական դիրքի, բնակլիմայական, ռելիեֆային և լանդշաֆտային պայմանների, այնպես էլ մերձավոր տարածքների ֆլորիստական շրջանների բուսական և կենդանական աշխարհների ազդեցության ներքո:

Այս գոտուն բնորոշ են կենդանական աշխարհի այն ներկայացուցիչները, որոնք հիմնականում տարածված են ամենուրեք ՀՀ տարածքում: Այս գոտուն առավել բնորոշ **կաթնասուններն** են (դաս *Mammalia*)՝

Տարածքում շատ կան նաև **անողնաշարավորներ**՝ որդեր, փափկամարմիններ՝ արմենիկա, լեվանտինա տեսակները, տարրատեսակ ձողամիջատներ, միջատներ (մրջյուն, մեղու, ծղրիդ, ճոխիկ, մորեխ, փայտոջիլ, կապտաթիթեռ, կաղամբաթիթեռ, մոծակ, դաշտային ճանճեր), որոնք միաժամանակ հանդիսանում են հարուստ կերային

բազա ողնաշարավոր կենդանիների համար: Ծորիդներից առավել հանդիպում են Սագա ծորիդները, ավելի հազվադեպ՝ Երկարատտ ֆիտեղրիմադուզան, Շալան, Շելկովնիկովի կանաչ թևավոր ծորիդը: Բզեզներից բնորոշ է Ասիական ցիցինդելը: Բազմաթիվ են գնայուկ բզեզները և դրանց մեջ խոշոր Ացինոպուսները, սովորական են խոշոր Սկարաբեյները և Գիմնոպլերները, Պոտոզիաները: Լավ ներկայացված են Երկարակնձիթները և Սևաբզեզները, բազմաթիվ են Կլերիդները և Թարախահանները: Ցերեկային թիթեռներից են Սատիրները, Զիզենները և Ճերմակաթիթեռները: Քարերի տակ հանդիպում է խայտաբղետ կարիճը:

Տարածաշրջանում գրանցված է երկու **էնդեմիկ** կենդանատեսակներ, որոնք ներառված են **ՀՀ կենդանիների “Կարմիր գրքում” (2010թ.)** և պատկանում են՝

Կարգ Ուղղաթևերի (Orthoptera) և Կարգ Բզեզներ կամ Կարծրաթևերի (Coleoptera) Դաս՝ Միջատներ:

Համաձայն նախնական տեղագնման աշխատանքների տվյալների և հրատարակված գիտական, հետազոտական և քարտեզագրական նյութերի՝ անմիջապես հանքավայրի տարածքում չեն հայտնաբերվել հազվագյուտ, էնդեմիկ, անհետացող կամ անհետացման եզրին գտնվող, “Կարմիր Գրքում” գրանցված կենդանատեսակներ:

4. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

4.1. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների համառոտ նկարագիրը

Օդային գծի կառուցումը կպահանջի իրականացնել նոր ենթակայանի շինարարություն, տեղադրել նոր հենարաններ և դրանք միացնել 110 կՎ գործող օդային գծին:

Աշխատանքները կազմակերպվելու է հետևյալ սխեմայով՝

- ընտրել ՕԳ ուղեծիրը,
- ընտրել ենթակայանի տեղը,
- տեղադրել հենարանները,
- իրականացնել ենթակայանի շինարարությունը,
- անցկացնել լարերը, կատարել միացում

- կարճատև ժամանակով հոսանքազրկվելու է գործող գիծը, ապահովելով տեղի սպառողների մատակարարումը ժամանակավոր սխեմայով:

Նոր օդային գծի հաշվարկային երկարությունը կկազմի 2.5 – 2.6 կմ:

Ըստ նախնական գնահատման ենթակայանի հարթակի համար կպահանջվի 50x50 մ տարածք: Տարածքը կլինի անմիջապես սպասարկման շինության մոտ:

Աշխատանքների ընթացքում ծառահատումներ չեն նախատեսվում, մոտեցման ճանապարհները առկա են:

4.2. Օգտագործվող նյութերը և բնառեսուրսները

Աշխատանքների համար կպահանջվեն հետևյալ նյութերը՝

- Հենասյուներ 6 - 8 հատ,
- Լարեր 2500 - 2600 մ,
- Մեկուսիչներ՝ ըստ աշխատանքային նախագծի հաշվարկների:

Աշխատանքների իրականացման համար բնառեսուրսներից կպահանջվի միայն ջուր՝ բետոնային խառնուրդի պատրաստման, տարածքի ջրցանի և շինարարական անձնակազմի խմելու տնտեսական կարիքների համար:

Ջրապահանջի ծավալները կհաշվարկվեն աշխատանքային նախագծի և ՇՄԱԳ հաշվետվության շրջանակներում:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Նախատեսվող գործունեության հիմնական բնապահպանական ռիսկերը կապված են շինարարական տեխնիկայի շահագործման, հողային աշխատանքների իրականացման, շինանյութերի, վառելիքի և քսայուղերի պահեստավորման և օգտագործման հետ:

Սակայն առաջնահերթ խնդիր է հանդիսանում “Արևիք” ազգային պարկի պահպանության ռեժիմի ապահովումը: Այդ նպատակով նախագծային խմբին տրվել է առաջադրանք օդային գծի նոր ուղեգիծը ընտրել այնպես, որ այն չհատվի “Արևիկ” ազգային պարկի սահմանների հետ:

Մնացած բնապահպանական ռիսկերը նվազեցնելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները.

- Օգտագործել գոյություն ունեցող ճանապարհները՝ վերականգնելով և վերանորոգելով դրանք,
- Աշտարակների կառուցման տեղամասերում հողի վերին շերտի հանում և պահեստավորում հատուկ պաշտպանված վայրում
- Շինարարական հրապարակի տեղի ընտրություն, բուսածածկը նվազագույն կերպով վնասելու տեսակետից

- Եթե հենասյուների հիմքի կառուցման ժամանակ հնարավոր չի լնի խուսափել ծառահատումներից, կազմակերպել նույն ծառատեսակների կրկնակի տնկում, հաշվարկել հասցված վնասը և հատուցել այն
- Կառուցել շինհրապարակը շրջանցող առուներ մակերևութային ջրերի հեռացման համար
- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների պարբերական տեխնիկական սպասարկում
- Ծանր տեխնիկական միջոցների աշխատանքների իրականացում միայն ժամը 09.00-ից մինչև 17.00
- Հողային զանգվածների խոնավացում
- Շինհրապարակի ջրցան
- Գյուղական ճանապարհների վրա մեքենաների արագության նվազեցում և շարժի սահմանափակում
- Նյութերի փոխադրման ընթացքում, բեռնատարների թափքի ծածկում
- Նյութերի պատշաճ պահեստավորում և կառավարում՝ փոշու մակարդակը սահմանափակելու նպատակով
- Շինարարական սարքավորումների կայանում հատուկ վայրերում
- Մեքենաների լիցքավորում և տեխնիկական սպասարկում մոտակա տեխսպասարկման կայաններում
- Վառելիքի և քսայուղերի պահեստավորում փակ տարողություններում պաշտպանված վայրերում
- Բոլոր աշտարակների վրա նախազգուշացման նշանների տեղադրում և համայնքի իրազեկում էլեկտրականության վտանգի, էլեկտրահարման ռիսկերի և վտանգների վերաբերյալ
- Աշխատանքների ավարտից հետո շինհրապարակների կառույցների ապամոնտաժում, սարքավորումների տեղափոխում համապատասխան բազաներ
- Շինաղբի և այլ թափոնների տեղափոխում համայնքապետարանի կողմից հատկացված հատուկ վայրեր
- Տեղանքի վերականգնում և բարեկարգում, պահեստավորված հողի բերրի շերտի փոում:

Նախատեսվող գործունեության վնասը հիմնականում կապված կլինի հենարանների տեղադրման ընթացքում ծառահատումների հետ: Սակայն տվյալ փուլում դեռ վերջնականապես որոշված չեն հենասյուների տեղերը: Նախագծի կազմում կորոշվեն այդ տեղերը, կհաշվարկվեն վնասվող ծառերի հատուցման գումարները և դրանց հատուցման ժամանակացույցը: Նոր ծառատունկի վայրը և ժամկետները կհամաձայնեցվեն համայնքապետարանի հետ:

Փոխհատուցում

Ինչպես նախորդ ենթակետերում նշվել է, բնապահպանական միջոցառումների նպատակն է նվազեցնել գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վերականգնել բոլոր այն տեղամասերի նախնական վիճակը, որոնք կենթարկվեն գործունեության ազդեցության: Ըստ նախնական գնահատման բնապահպանական միջոցառումների գումարը կկազմի՝ 200 – 220 հազար դրամ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. “ՀՀ Սյունիքի մարզի Լիճքի պղնձի հանքավայրի տարածքից «Մեղրի -1» 220կՎ լարման օդային գծի տեղափոխման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն”: “Թաթաթոուն” ՍՊԸ: Երևան: 2015 թ.
2. Строительная климатология СНРА II -7.01-96
3. Пособие по составлению раздела проекта “Охрана окружающей природной среды ” к СНиП 1.02.01-85. Госстрой СССР, ЦНИИПРОЕКТ, Москва, 1989г.
4. РД 52.04.186-89. Руководство по контролю загрязнения атмосферы. ГК СССР по гидрометеорологии
5. Հայաստանի Ազգային Ատլաս: Երևան, 2007
6. Հայաստանի բնաշխարհ, 2006
7. Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիր, 2002
8. Հայաստանի կենսաբազմազանության առաջին ազգային զեկույց, 1999